ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔԸ XV- XVII ԴԱՐԵՐՈՒՄ

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

Բյուզանդական կայսրությունն իր վախճանին հասավ 1453 թ., երբ թուրքերը գրավեցին նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Չնայած հերոսական պաշտպանությանը՝ քաղաքն ընկավ, որին հաջորդեցին թալանն ու կողոպուտը: Այդ պաշտպանության մասին խոսել են շատ պատմիչներ, նույնիսկ իր թուրքամետությամբ աչքի ընկնող Կրիտովուլոսը: Ազգությամբ հույն լինելով հանդերձ՝ նա իր աշխատության կիզակետում է դնում սուլթան Մեհմեդ II-ին՝ փառաբանելով նրա գործունեությունը: Կրիտովուլոսը, որը դեպքերի ականատեսն է, այսպես է խոսում հույների մասին. «Հույները ապշած էին թշնամու հարձակման ուժգնությունից, բայց նրանք փոխարենը ամեն ինչ արեցին՝ ոչ մի բան հաշվի չառնելով»[1]: Իրադարձությունների մեկ այլ ականատես՝ ազգությամբ հույն Մ. Դուկասը, ի սրտե ողբում է հույների համար՝ նշելով հետևյալը. «Տարբեր լեզուներով խոսում են եղելության մասին, ցավում Կոստանդնուպոլսից Սիրիա ընկած տարածքներում, Եգիպտոսում, Հայաստանում և այլուր»[2]:

Ժամանակի շատ գործիչներ կարծում էին, որ Կոստանդնուպոլսի անկումով վերջ կտրվի քրիստոնյաների բնակեցմանն այնտեղ, քանի որ քաղաքը պիտի դառնար Օսմանյան կայսրության վարչական կենտրոնը: Հետագայում պարզվեց, որ հույները չափազանց հարկավոր էին Մեհմեդին: Նա հետաքրքրվում էր հունական արվեստով: «Նա ուսումնասիրել էր հույներին վերաբերող ամեն ինչ, որ թարգմանված է եղել արաբերեն ու պարսկերեն»[3],- գրում է նվաճողով հիացած Կրիտովուլոսը: Հույն ժողովրդի դարավոր մշակույթին ծանոթ Մեհմեդը քաղաքը գրավելուց հետո սկսեց այն վերաբնակեցնել հույներով, հայերով և հրեաներով: Մի քանի տարվա ընթացքում այստեղ բերվեցին հույներ Տրապիզոնից, Զմյուռնիայից, Սիրիայից[4], Սամոթրակեից, Թասոսից և տարբեր հունաբընակ վայրերից[5]: Շուտով Կոստանդնուպոլիսը նրանց համար դարձավ համայնքի կենտրոն, ուր այնուհետև պիտի բնակվեին այլ կարգավիճակով:

Վերաբնակեցված հույները տեղավորվեցին մայրաքաղաքի առանձին թաղամասերում, որոնցից շատերը ստացան նրանց նախկին բնակավայրերի անունները: Ըստ Էվլիա Չելեբու՝ Իզմիրի ժողովուրդը բնակվում էր Բյոյուք Ղալաթիայում, կարամանցիները՝ Բյոյուք և Քյուչուկ Կարամանում, գալիպոլցիները՝ Թերսանեում: 1475 թ. Կաֆայի գրավումից հետո այնտեղի բնակիչների մի մասը

---

[1] **Kritovoulos**, *History of Mehmed the Conqueror, Princeton, 1954, p. 38.*

[2] **Ducas M.,** *Historia Byzantina, Bonnae, 1834, p. 306.*

[3] **Kritovoulos,** նշվ. աշխ., էջ 23:

[4] **Ducas M.,** նշվ. աշխ., էջ 314: Հեղինակը նաև նշում է, որ սուլթանի հրամանով մինչև սեպտեմբեր 5000 ընտանիք պիտի տեղափոխվեին մայրաքաղաք (նույն տեղում, էջ 313):

[5] **Kritovoulos,** նշվ. աշխ., էջ103:

հաստատվեց Էդիրնե գափուի և Պալաթի միջև (թաղամասը հետագայում կոչվեց Քեֆելի մահալլեսի), մյուս մասը՝ Կետիք փաշա թաղամասում[6]: Այս թաղամասերում ապրում էին թե՛ հույներ, թե՛ հայեր և թե՛ հրեաներ: Մեծ քանակությամբ հույներ տեղավորվել էին Ղալաթիայում և Ֆեներում, որտեղ էլ գտնվում էր նրանց պատրիարքանիստ եկեղեցին:

Հույների թվաքանակը Կոստանդնուպոլսում հետզհետե ստվարանում էր: XV դ. նրանք թվաքանակով մահմեդականներից հետո առաջինն էին, ունեին իրենց թաղային եկեղեցիները, հիմնական զբաղմունքը և շատ կարևոր տարր էին կայսրության բազմազգ խճանկարում:

Դժվար է ասել XV-XVII դդ. Կոստանդնուպոլսում բնակվող հույների ստույգ թվաքանակը: Համաձայն իսպանացի ճանապարհորդ դե Վիլյարոյի՝ XVI դ. քաղաքում ապրում էին 60 հազար թուրք, 40 հազար հույն և հայ, 10 հազար հրեա: Ըստ նրա՝ 4 հազար հույն և լատին ընտանիքներ բնակվում էին Բերայում, 10 հազար հույն ընտանիքներ՝ քաղաքի ծայրամասերում[7]: Հնարավոր չէ պարզել այս տվյալների բացարձակ ճշտությունը, քանի որ պարբերաբար իրականացվող գաղթեցումները, բնակչության՝ հարկամատյաններից խուսափելը, հաճախակի հրդեհները դժվարացնում են բնակչության խիստ ճշգրիտ թվաքանակը որոշելը:

1453 թվականը եղավ Կոստանդնուպոլսի հունական համայնքի կազմավորման սկզբնակետը: Այդուհանդերձ, տիրող մահմեդականի ենթակայության տակ էին բնակվելու հույները՝ իբրև կայսրության հպատակ տարրեր, սակայն սկզբնապես օժտված որոշակի արտոնություններով: Դրանցից էր, օրինակ, այն, որ Մեհմեդը ճանաչեց հունական միլեթը և կայսրության հույն ազգի հոգևոր առաջնորդ նշանակեց Գենադիոս Սքոլարիոսին, որն իր ժամանակի լուսավոր քաղաքական գործիչներից էր, ամբողջ կյանքում պայքարել է հույն ազգի բարօրության համար և ստացել «սուրբ» հորջորջումը[8]:

Սքոլարիոսը հայտնի էր դեռևս Կ. Պոլսի անկման վերջին տարիներին, երբ Բյուզանդիայի վերնախավը գաղափարապես բաժանվել էր մի քանի հոսանքների՝ լատինամետ, որոնք ցանկանում էին ընդունել Հռոմի պապի գերիշխանությունը՝ Բյուզանդիայի փրկությունը կապելով Եվրոպայի հետ, ուղղափառներ, որոնք ավելի արմատական էին, թուրքամետներ, որոնք բնական էին համարում Բյուզանդական կայսրության կործանումը[9]: Սքոլարիոսն ուղղափառ հոսանքի տիպիկ ներկայացուցիչ էր, իսկ հետագայում նա նույնիսկ ղեկավարել է այդ հոսանքը: Ուղղա-

---

[6] **Ապաճյան Գ.,** Ո՞ւր և ինչպե՞ս զետեղվեցան գրավումեն վերջ Իսթանպուլ բերված հայ գաղթականները (Շողակաթ, 1953, N 9-10, էջ 258):

[7] Ապաճյան Գ., Հայերու անվամբ կազմված առաջին թաղեր և Իսթանպուլահայ բնակչությունը գրավման հաջորդող տարիներուն մեջ (Շողակաթ, 1954, N 4, էջ 92):

[8] Μεγαλη Ελληνικη Εγκικλοπαιδεια Τομος 8, σ. 198 .

[9] Ահա թէ ինչ է գրել Կրիտովուլոսը.«Մի մեծ պետություն կործանվեց, և այն էլ ամենահինը, ոչ կարճ պայքարից հետո… Զարմանալի չէ, որ նույն իրադարձություններն են պատահում, և հույները կորցնում են իրենց ղեկավար դերն ու բարեկեցությունը, որոնք անցնում են ուրիշներին այնպես, ինչպես ուրիշներից են եկել իրենց: Ուստի պահպանվում է իրերի բնական կարգը» (**Kritovoulos.,** նշվ. աշխ., էջ 12):

փառները, ի դեմս Սքոլարիոսի, կարծում էին, որ Եվրոպայի ազդեցությունը կթուլացնի իրենց դիրքերը, իսկ օտարների ներխուժումն ավելի կուժեղանա[10]:

Գուցե Սքոլարիոսի՝ կաթոլիկ եկեղեցու հետ միացման հարցում ունեցած ընդդիմադիր կեցվածքն է պատճառը, որ Մեհմեդը բարձր է գնահատել նրան՝ լավ հասկանալով, որ Սքոլարիոսին պատրիարք ընտրելով՝ կկանխի Եվրոպայի հետ ուղղափառների որևէ հնարավոր մերձեցում: Ասենք, որ Մեհմեդը, Սքոլարիոսին պատրիարք ընտրելով, հետապնդում էր նաև այլ նպատակներ: Նախ, հոգևոր առաջնորդի առկայության դեպքում մայրաքաղաք կգային այն բոլոր քրիստոնյաները, որոնք վախենում կամ խուսափում էին այնտեղ վերադառնալուց[11]: Բացի այդ, հոգևոր առաջնորդը կկարողանար իրեն ենթարկել ամբողջ միլեթը, իսկ կառավարման այս ձևը ավելի հեշտ կլիներ, և, վերջապես, Սքոլարիոսին որոշ արտոնություններ տալով՝ Մեհմեդը հող կնախապատրաստեր մյուս՝ հայ ու հրեա միլեթների և նրանց առաջնորդների դժգոհության համար[12]: Այս ճանապարհով նա ոչ միայն կանխում էր ոչ մահմեդականների որևէ մերձեցում, այլև արհեստականորեն տարաձայնություն էր առաջացնում նրանց միջև: Հույն պատրիարքին տրված այդ արտոնությունները հետագայում հույն-հայկական հարաբերությունների սրման պատճառ դարձան:

Գենադիոսին պատրիարք նշանակելուց հետո սուլթանը նրան իրավունք տվեց ունենալ եկեղեցական դատարան՝ հոգևոր սինոդ, որը պիտի լուծեր այն բոլոր հարցերը, որ վերաբերում էին հույների ներքին կյանքին՝ ամուսնություն, Զատկի տոնը ինքնուրույն տոնելու իրավունք և այլն: Հույն հոգևորականները պիտի ազատվեին հարկերից: Սա, իհարկե շատ կարևոր էր Կ. Պոլսի հույն համայնքի հետագա զարգացման համար, սակայն Մեհմեդի տված արտոնությունները և՛ ձևական էին, և՛ ժամանակավոր:

Բավական սուր էր դրված հունական եկեղեցիների հարցը: Կոստանդնուպոլիսը գրավելուց մի քանի օր անց Մեհմեդը մտնում է քաղաք, շարժվում դեպի Ս. Սոֆիայի տաճարը, գլուխ խոնարհում և երկար ժամանակ փառաբանում ալլահին: Նա ներում է շնորհում տաճարում գտնվող մի քանի քրիստոնյաների[13]: Տաճարը, որ հույն ազգի և միաժամանակ մյուս քրիստոնյաների սրբության ու վեհության խորհրդանիշն էր, դարեր շարունակ գայթակղում էր սուլթաններին:

---

[10] **Удальцова З. В.,** *Борьба партий в Византии и Виссарион Никейский (Византийский временник, М., 1949, N 2, с. 299);* **Сказкин С. Д.,** *История Византии, т.3, М., 1967, с. 178.*

[11] **Inalchik H.,** *The Ottoman Empire: Conquest, Organization and Economy, London, 1978, p. 236.*

[12] Հայտնի է, որ Գենադիոսին պատրիարք նշանակելուց հետո Մեհմեդը ճանաչել է նաև հայկական ու հրեական միլեթները՝ նրանց հոգևոր առաջնորդ նշանակելով Հովակիմին և Մոսես Կապսալիին: Սակայն հետաքրքիր է, որ Կրիտովուլոսը, խոսելով հրեական միլեթի ճանաչման և նրա առաջնորդ Կապսալիի մասին, չի հիշատակում հայկական միլեթի ճանաչման ու Հովակիմի պատրիարք դառնալու հանգամանքը:

[13] **Рансимин С.,***яПаден, еяКонстант, нополяявя1453яг.,яМ.,я1983,яс.я133.я*

я

Էրաբեր 2-9

Ս. Սոֆիայի (հուն.՝ իմաստություն) տաճարը կառուցվել է Կոստանդիանոս Մեծի (IV դ.) ժամանակ: Սկզբնապես այն քառանկյուն շինություն է եղել, սակայն հետագայում ընդարձակվել է, դարձել հսկայական մի համալիր, իսկ Կոստանդնուպոլսի անկման վերջին տարիներին՝ պատրիարքների աթոռանիստը[14]: Անգամ Կրիտովուլոսը ցավով է նկարագրում թուրքերի կողմից եկեղեցիների ավերումը. «Ինչպե՞ս կարող է մարդը դա բացատրել: Նրանք սուրբ մասունքները գցում են հատակին կամ այրում կրակների մեջ: Սուրբ գրքերը վաճառվում են, զոհասեղանները քանդվում են հիմնահատակ, շինությունները փորվում են ոսկի գտնելու նպատակով»[15]: Բացի Ս. Սոֆիայի տաճարից, թուրքերը թալանել ու ավերել են նաև մյուս եկեղեցիները, իսկ շրջակա բնակչությանը տեղահան արել: Համեմատաբար քիչ են տուժել մեծ մասամբ հույներով բնակեցված Պետրիոնը, Ֆեները, Ստուդիոնը և Սամաթիան: Ըստ Ս. Ռանսիմենի՝ գրավումից անմիջապես հետո Մեհմեդի հրամանով միայն Ս. Սոֆիայի տաճարն էր վերածվելու մզկիթի[16]:

Մեհմեդը եկեղեցիներից մի քանիսը հույներից վերցրել և տվել է հայերին: Կա կարծիք, որ XVIII դարում Կ. Պոլսում բյուզանդական շրջանից միայն երեք եկեղեցի էր մնացել: Դրանցից մեկը հայտնի էր Ս. Մարիամ անվամբ: Այս եկեղեցին պահպանվել է Մեհմեդի հատուկ ֆերմանի համաձայն՝ շնորհիվ նրա սիրելի՝ ազգությամբ հույն ճարտարապետ Խրիստոդուլոսի: Մյուս երկուսը՝ Ս. Դիմիտրին և Ս. Գեորգ Կիպարիսցին, բավական փոքր էին և հավանաբար այդ պատճառով աննկատ էին մնացել թշնամուց[17]: Բյուզանդագետ Ա. Պասպատին ներկայացնում է մի քանի հունական եկեղեցիների պատմությունն ու ճակատագիրը: Սոֆիայի տաճարից բացի, շատ եկեղեցիներ մզկիթի վերածվեցին: Դրանցից է Պամմակարիստայի տաճարը (Ֆեթիհյե ջամիսի), որը միայն 1545 թ. է վերածվել մզկիթի[18]: Հ. Սիրունին նշում է 8 հունական եկեղեցիների անուններ, որոնք Մեհմեդի ժամանակ մզկիթներ են դարձել: Սակայն թուրքերը չեն բավարարվել այսքանով: Հետագա դարերում էլ նրանք ամեն ջանք գործադրել են հույներից նրանց եկեղեցիները խլելու համար:

---

[14] **Ինճիճեան Ղ.,** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 144: Ս. Սոֆիայի տաճարը համարվում է բոլոր դարերի ճարտարապետության գլուխգործոցներից մեկը, որը կառուցվել է երկու տաղանդավոր ճարտարապետների՝ Թիմիոսի և Իսիդոր Միլեթացու կողմից: Կա կարծիք, որ նրանք հայկական ծագում են ունեցել և մասնակցել են նաև Ս. Առաքյալների վանքի կառուցմանը *[***Тер-Газарян Р.,** *Армяне на Византийском престоле (Византийское наследство, Е., 2002, N 3, с. 37-38)]:я*

[15] **Kritovoulos.,** նշվ. աշխ., էջ 73-74:

[16] **Рансимин С.,** նշվ. աշխ., էջ 140:

[17] Նույն տեղում, էջ 140-141:

[18] Սա բյուզանդական շրջանի հայտնի եկեղեցիներից էր և աչքի էր ընկնում իր ճոխությամբ ու գեղեցկությամբ: Մեհմեդ II-ի օրոք այն կարճ ժամանակով դարձել է պատրիարքանիստ եկեղեցի, սակայն հետագայում Սքոլարիոսի խնդրանքով Մեհմեդը տեղափոխել է պատրիարքի նստավայրը: Չնայած դրան, եկեղեցին չի կորցրել իր հեղինակությունը և մինչ XVI դ. Հիշատակվում է որպես հունական *(Πασπατη Α., Βηζαντιναι Μελεται, Κωνσταντινοπολεις, 1877, σ 298– 299).*

Վավերագրերից մեկի համաձայն՝ 1564 թ. Սամաթիայի Ալթը Մերմեր վայրի Սեյիդ Օմեր թաղամասի մահմեդականները բողոքել են՝ ասելով, որ հույները այնտեղ նոր եկեղեցի են կառուցել և դիմել են կառավարությանը՝ քանդելու այն: Հույները խնդրել են չավերել՝ նշելով, որ եկեղեցին իրենց Մեհմեդ II-ն է տվել և նույնիսկ Սելիմ I-ի ժամանակ չի ավերվել[19]: Հույներն ամեն գնով ցանկանում էին պահել բյուզանդական շրջանից ստացած իրենց վերջին պատառիկները: Նույն վավերագիրը վկայում է, որ հույները որպես գրավոր ապացույց են ներկայացրել Կ. Պոլսի գրավումից հետո (1498 թ.) Խալիլ անունով մի անձնավորության կողմից կնքված փաստաթուղթ, որտեղ նշվում է. «Ալթը Մերմերի մոտակայքում Բաշուկլոզ անունով քահանայի տրամադրության տակ գտնվող հին եկեղեցին օգտագործելու համար հանձնվել է նրանց (հույներին-Բ. Մ.)»[20]: Չնայած հույների գործադրած մեծ ջանքերին՝ կառավարությունը հրամայում է նրանցից վերցնել եկեղեցին և քանդել:

Հայտնի է, որ Սելիմ I-ը ևս մեծ քանակությամբ հունական եկեղեցիներ է ավերել կամ մզկիթների վերածել: Սելիմի ոչ հանդուրժողական վերաբերմունքի մասին են վկայում նույն վավերագիրը և Գ. Այվազովսկու հետևյալ տողերը. «Ցայնժամ հրաման ետ Սելիմ մեծի վեզիրին զամենայն եկեղեցիս քրիստոնէից փոխել ՝ի մզկիթս, խափանել զամենայն զաստուածային պաշտամունս, և մահու պարտ առնել առ հասարակ զքրիստոնեայս՝ որ չկամիցին ուրանալ ՝ի հայրենի հաւատոցն քրիստոնէութեան»[21]: Հունական եկեղեցիները մզկիթների վերածելու քաղաքակա-նությունը շարունակվել է նաև հետագա դարերում:

Թեև Կոստանդնուպոլսի անկումից հետո հունական արվեստը անկում ապրեց, սակայն XV դ. ի վեր հույները սկսեցին ակտիվ դեր խաղալ Օսմանյան կայսրության առևտրի և արհեստների բնագավառներում: Հույները տարիներ շարունակ կարևոր տեղ էին գրավում պետական համակարգում, նրանցից շատերը սերնդեսերունդ զբաղեցնում էին վարչական տարբեր պաշտոններ[22]: Խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Կոստանդնուպոլիսը, Զմյուռնիան, Սալոնիկը և այլն, նրանք շարու-նակում էին առևտրական գործունեություն ծավալել:

Մեհմեդ II-ը լավ էր հասկանում հույն ժողովրդի դերն ու նշանակությունը կայսրության համար, ուստի հույն արհեստավորներին ու առևտրականներին տալիս էր ազատ գործունեության իրավունք: Ըստ Կրիտովուլոսի՝ քաղաքում

---

[19] **Փափազյան Ավ.,** Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (XVI-XIX դդ), Ե., 1999, էջ 209:

[20] Հավանաբար, ճիշտ է Ավ. Փափազյանի կարծիքը, որ քահանայի անունը ոչ թե Բաշուկլոզ է, այլ Բասիկլոզ, ավելի ճիշտ՝ հույների մեջ շատ տարածված Վասիլիոզ: Վավերագիրը վերա-բերում է 1564 թ.: Այստեղ նշվում է. «Այդ ժամանակվանից ի վեր անցել է 66 տարի», այսինքն, խոսքը 1498 թ. մասին է (նույն տեղում, էջ 210):

[21] Նույն տեղում, էջ 209-210, **Այվազովսկի Գ.,** Պատմութիւն Օսմանեան պետութեան. հ. Ա. Վենետիկ, 1841, էջ 302: Հեղինակը նշում է նաև, որ հույների պատրիարքը սուլթանին հիշեցնում է Մեհմեդ II-ի հրամանը, համաձայն որի, հունական եկեղեցիները այլևս երբեք մզկիթի չէին վերածվելու, «և չխափանել զպաշտամունս նոցա և զհանդես Զատկին»: Սակայն պատրիարքը, չունենալով գրավոր ապացույց, պատվիրում է բերել երեք զառամյալ ենիչերիների, որոնք հաս-տատում են նրա վկայությունը:

[22] **Βακαλοπουλοσ Α.,** *Νεα Ελληνικη Ιστορια, Θεσσαλονικη, 2003, σ 82.*

վերաբնակեցվածներին նա տալիս էր հող, տներ, անասուններ, նույնիսկ որոշ ժամանակով ազատում հարկերից[23]: Ըստ թուրք պատմաբան Հ. Ինալջիկի՝ այդ պատճառով Մեհմեդը առաջացրել է իր շրջապատի դժգոհությունը[24]: Չնայած դրան՝ նրա քաղաքականությունը շարունակել են նաև հաջորդները, ինչպես օրինակ՝ Բայազետ II-ը: Այն մասին, որ հույները կարևոր դեր էին կատարում Օսմանյան կայսրությունում, խոսում է ոչ միայն հույն, այլև թուրք պատմագրությունը, մասնավորապես՝ Հ. Ինալջիկը. որը նշում է. «Հույներն ունեին որոշակի ազդեցություն պալատներում և պետական գործերում»[25]:

Հույն, հայ և հրեա արհեստավորների, ինչպես նաև առևտրականների համբավը վաղուց դուրս էր եկել Օսմանյան կայսրության սահմաններից: Նրանք բարձր գնահատականի էին արժանանում նաև Եվրոպայում: Ֆրանսիան Ֆրանցիսկոս I–ի ժամանակ (1494-1547) Օսմանյան կայսրության հետ կնքեց առևտրական պայմանագիր, որն իր տեսակի մեջ առաջինն էր Եվրոպայի հետ Թուրքիայի հարաբերություններում: Դա կնքվեց ֆրանսիացիներին արդեն հայտնի հունական առևտրական կազմակերպությունների (*diomologhseis*) շնորհիվ: Այս պայմանագրով էր սկզբնավորվում հանրածանոթ կապիտուլյացիոն ռեժիմը: Հետագայում այդ դաշնագրերը նորոգվեցին 1604 և 1673 թթ., և, բացի այդ, թուրքերը համանման առևտրական պայմանագիրը կնքեցին նաև Անգլիայի հետ[26]:

Մեհմեդը մեծ հետաքրքրություն ուներ արհեստների նկատմամբ: Նա իր պալատ էր հրավիրում Արևելքի ճարտարապետներին, սակայն ամենից շատ՝ հույներին: Ինքը պալատում ուներ մի քանի անձնական նկարիչներ[27]: Նրա ժամանակաշրջանի ոչ մի աշխատանք չի պահպանվել, քանի որ Բայազետ II-ը ոչնչացրել է դրանք: Այս ժամանակներից են պահպանվել հույների «Երեքգլխանի օձ» կոթողը, ինչպես նաև Այա Սոֆիայի մի շարք խճանկարներ[28]: Բնականաբար, ընդօրինակելով բռնակալին, Մեհմեդի արքունիքը ձևացնում էր, թե հասկանում և գնահատում է հունական արվեստը[29]: Հույները նախնիներից ժառանգել էին մի շարք արհեստներ (նավաշինություն, թիթեղագործություն, զինագործություն, դարբնություն, կաշեգործություն, ձկնորսություն, հյուսնություն և այլն), որոնք շարունակեցին օսմանյան շրջանում: Նրանք հմուտ մսագործներ, կոշկակարներ, ոսկերիչներ, կաթնագործներ էին: Մանր առևտրականության մեջ հայտնի էին

---

[23] **Kritovoulos.,** նշվ. աշխ., էջ 139:

[24] **Inalchik H.,** նշվ. աշխ., էջ 246:

[25] Նույն տեղում:

[26] **Βακαλοπουλος A.,** նշվ. աշխ., էջ 83: **Ալպոյաճյան Ա.,** Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը: Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1910, էջ 264:

[27] Մեհմեդ II-ի պալատական նկարիչներից էր իտալացի Ջենտիլ Բելինին, որը պիտի նկարեր սուլթանի դիմանկարը: Ժամանակակիցները վկայում են, որ սուլթանը կտրել է իր ստրուկներից մեկի գլուխը, որպեսզի այս նկարչին ցույց տա պարանոցի մկանների ջղաձգումը ¥**Сказкин С.,** *История Византии, т. 3, М., 1967, с. 186):я*

[28] **Babinger F.,** *Mehmed the Conqueror and His Time, Princeton – New Jersey, 1978, p. 469.*

[29] **Βακαλοπουλος A.,** նշվ. աշխ., էջ 53:

հատկապես լեբլեբի (խոշոր սիսեռի աղանդեր), նաև բանջարեղեն, շագանակ ու հնոտի վաճառողները[30]: Փաստորեն, հույն արհեստավորի աշխատանքն անհրաժեշտ էր կյանքի բոլոր բնագավառներում: Ահա թե ինչու էին մահմեդականները սկզբնապես մեծահոգաբար վերաբերվում քրիստոնյա արհեստավորներին: Սակայն դա ժամանակավոր էր, քանի որ մահմեդականները հետագայում քրիստոնյաներից սովորեցին շատ հմտություններ և նրանց դուրս մղեցին արհեստների, մասնավորապես արհեստավորական վերնախավի շարքերից:

XV դարում Կոստանդնուպոլսի հույն համայնքը մեծ դեր ուներ Օսմանյան կայսրության տնտեսության զարգացման գործում: Պետությանը մեծ եկամուտ էին բերում հույներով բնակեցված Ղալաթիան և Բերան: Հույն ապակեգործները բնակվում էին Ֆեներ և Խասքյոյ թաղամասերում: Ֆեներում էին ապրում նաև հույն ոսկերիչները: Թե՛ ապակեգործությունը, թե՛ ոսկերչությունը բավական եկամտաբեր արհեստներ էին: Հավանաբար, այս հանգամանքն է պատճառը, որ Ֆեների հույները աչքի էին ընկնում իրենց հարստությամբ: Թաղամասի անունով հարուստ հույները շուտով կոչվեցին ֆանարիոտներ (*fanarioteis)*, որոնք հետագա դարերում մեծ դեր խաղացին հույն ժողովրդի պատմության մեջ[31]: Հայտնի չէ, թէ կոնկրետ որտեղ էին բնակվում հույն կաշեգործները և կոշկակարները: Իրենց արհեստների բնույթին համապատասխան՝ հավանաբար, նրանք սփռված էին քրիստոնյաներով բնակեցված թաղամասերում և իրար հետ ակտիվ առևտրական կապերի մեջ էին քաղաքի և դրսի շուկաներում: Քաղաքը կաշի էր ներմուծում հիմնականում Բալկաններից: Կաշվի առևտուրը, մշակումը և վաճառքը իրականացնում էին հույները:

Բացի հույներից, Կոստանդնուպոլսում բնակվող հայերը և հրեաները ևս զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Նրանք իրենց կարևորությամբ հետ չէին մնում հույներից, ուստի վերջիններիս հետ հաճախ գտնվում էին տնտեսական լուրջ մրցակցության մեջ: Ավելացնենք, որ Օսմանյան կայսրության առանձին բնակավայրերում արհեստի որևէ ճյուղի մենաշնորհը պատկանում էր կա՛մ հույներին, կա՛մ հայերին: Օրինակ՝ Սիրիայում ակնեղենի արտադրության մենաշնորհը հայերինն էր: Ապակու արտադրությունը հույների ավանդական արհեստն էր ոչ միայն Կ. Պոլսում, այլ Հեբրոնում: Հույն հմուտ ձկնորսներ կային Մենզալայում, Բուլուսի լճերի մերձակայքում և այլուր[32]:

XVII դ. վերջի և XVIII դ. սկզբի Կոստանդնուպոլսի ներքին կյանքի մասին է խոսում ֆրանսիացի ճանապարհորդ դը Լա Մոտրեն. «Կը հիշե նաև, որ Թուրքիո մեջ քիչ թիվով հույն և ավելի քիչ թիվով հայ մուրացկաններ կան»: Հեղինակը դա բացատրում է սննդի էժանությամբ[33], սակայն ավելի տրամաբանական է այն, որ հույներն ու հայերը, կամ նրանց մեծ մասը, ունեին իրենց մշտական զբաղմունքը և կարողանում էին վաստակել թեկուզ համեստ գումար:

---

[30] **Τριανταφιληδες Μ.,** *Νεα ελληνικη γραμματικη, Αθηνα, 1989, σ.108.*

[31] **Βακαλοπουλος Α.,** նշվ. աշխ., էջ 49:

[32] **Gibb A. and Bowen H.,** *Islamic Society and the West, part I, G.B., 1951, p. 299.*

[33] **Քյուրտյան Հ.,** Ա. Տը Լա Մոթռեի ուղեգրութենեն՝ հայոց մասին (Հայրենիք, Բոստոն, 1950, N 6, էջ 99):

XV-XVII դդ. Կ. Պոլսի հույն համայնքն աչքի էր ընկնում իր բնակչության տարաբնույթ շերտերով: Հիմնական մասն այն հույներն էին, որոնք կա՛մ բնակվել էին դեռևս բյուզանդական շրջանից, կա՛մ նրանք, որոնց Մեհմեդ II-ը տեղահանել էր իրենց բնակավայրերից: Սակայն Կոստանդնուպոլիսն անընդհատ համալրվում էր նոր բնակչությամբ, քանի որ Մեհմեդի կազմակերպած բռնագաղթեցումները շարունակվում էին նաև հետագա դարերում: Նորեկները, հատկապես նրանք, որ գաղթել էին Կարամանից, Պոնտոսից, Իզմիրից, իրենց հետ բերել էին մասնագիտական նոր հմտություններ և մրցակցության մեջ մտել տեղացիների հետ: Նրանցից շատերը կարճ ժամանակում համալրել էին հարուստ ֆանարիոտների դասը:

XVI դ. հրեաները իրենց տնտեսության թվաքանակով գերազանցում էին հույներին: Համաձայն 1540 թ. հարկացուցակներից մեկի՝ Կ. Պոլսում բնակվող հույները, հայերը և հրեաները ունեին բազմաթիվ տնտեսություններ. հրեաները՝ 1522 տնտեսություն, հույները՝ 1457, հայերը՝ 807: Փաստորեն, հույներն իրենց տնտեսությամբ գրավում էին երկրորդ տեղը՝ զիջելով հրեաներին[34]:

Կոստանդնուպոլսի ոչ մահմեդական բնակիչները, անկախ տնտեսական մրցակցությունից, միմյանց հետ սերտ հարաբերությունների մեջ էին, իսկ անհրաժեշտության դեպքում օգնում էին միմյանց: Օրինակ՝ 1629 թ. թուրքերը առևանգում են մի հույն տղայի: Հույների հոգևոր առաջնորդը հայերից աջակցություն է խնդրում. «Օգնեցե՛ք մեզ վասն հաւատոյ, այսօր մեզ է, վաղն ձեզ է…»[35]: Այդ հարաբերությունները ձեռնտու չէին օսմանյան աստիճանավորներին, ուստի պետությունը հնարավորինս կանխում էր հույն-հայկական որևէ մերձեցում: Նրան մեծ անհանգստություն էր պատճառում քրիստոնյաների թվաքանակի մեծանալը, և XVI դարից վերջիններս սկսում են վտարվել մայրաքաղաքից, որի հետևանքով ժամանակի ընթացքում շատ թաղամասեր լքվում են: Դրանցից էին Էյուբը, Ակսարայը (Ակսարայից եկած գաղթականների թաղամաս) և այլն: Պետությունը քրիստոնյաներին հեռացնում էր իրենց թաղամասերից՝ պատրվակ բռնելով տեղի մահմեդականների անհիմն բողոքները, որոնց համաձայն, իբր քրիստոնյաները գինետներ են բացում, աղմկում և «խանգարում խաղաղ կյանքը»[36]: Կ. Պոլսի կադիին 1559 թ. տրված հրամանագրերից մեկում ասվում է. «Կ. Պոլսի Այա Սոֆիայի վակֆերից՝ Մահմուդ փաշայի խանում իջևանող առևտրականները խնդրագիր են ներկայացրել, որտեղ հայտնում են, որ տվյալ խանի մի շարք խցերի մեջ անհավատ մուշտակավաճառներ բնակվելով, խանի դարպասի երկու կողմերում փայտից և գերանից տնակներ և խանութներ են կառուցել և գիշերցերեկ օջախների շուրջ հավաքվելով, շատախոսում են և նույնիսկ տվյալ խանի մզկիթի մեջ մահմեդականներ գտնվելու ընթացքում՝ բարձրաձայն խոսում»[37]:

---

[34] **Тодоров Н.,** *Балканский город XV-XIX веков, М., 1976, с. 68-69,* **Խառատյան Ա.,** Հայ-հունական եկեղեցական հարաբերությունները Կ. Պոլսում (Պատմա-բանասիրական հանդես, Ե., 2004, N 1, էջ 51):

[35] Ժամանակագրութիւն **Գրիգորի Վարդապետի Կամախեցւոյ**, Երուսաղէմ, 1915, էջ 193:

[36] **Гордлевский В. А.,** *Избранные сочинения (Стамбул в XVI веке), т. IV, М., 1968, с. 60.я*

[37] **Փափազյան Ավ.,** նշվ. աշխ., էջ 206:

Վավերագիրը վկայում է, որ այս ճանապարհով թուրքերն իրականացնում էին մի քանի նպատակ: Նախ, խանգարում էին հույն առևտրականներին որևէ գործունեություն ծավալել, հետո հեշտությամբ ազատվում արդեն անցանկալի դարձած քրիստոնյաներից:

XVI-XVII դդ. հույն արհեստավորները սկսեցին միավորվել կորպորատիվ միություններում: Դրանք կազմակերպություններ էին, որտեղ անդամագրվում էին միևնույն մասնագիտության տեր մարդիկ (էսնաֆություններ): Այդպիսի կազմակերպություններ էին ստեղծում նավաշինարարները, դարբինները, ապակեգործները, նավաստիները և այլն[38]: Յուրաքանչյուր էսնաֆություն ուներ իր ներքին կանոնադրությունը, ընդհանուր գանձարանը, որից օգնություն էին տալիս չքավոր անդամներին: Դրանց գոյությունը հեշտացնում էր ապրանքի վաճառքը: Բացի ընդհանուր կանոնադրությունից, էսնաֆություններն ունեին իրենց ներքին կանոնադրությունը, որտեղ հանգամանորեն նկարագրվում էին նրանց ընդհանուր գործունեությունը, շահերը, նպատակները: Էսնաֆությունների մասին մեր ձեռքի տակ եղած հիշատակարանը վերաբերում է կաշեգործ-մորթեգործների խմբին: Կան կանոններ, որ առնչվում են մորթու, կաշվի մշակմանը, գունավորմանը: Հունական էսնաֆությունները մշտապես շփման մեջ էին մյուս միլեթներին պատկանող իրենց արհեստակիցների հետ, որի շնորհիվ ձեռք էին բերում նոր հմտություններ[39]: Ըստ Ա. Վակալոպուլոսի՝ հունական էսնաֆությունների վրա մեծ ազդեցություն ունեին մահմեդականները: Չնայած հույները ժառանգաբար փոխանցում էին իրենց արհեստների իմացությունը, սակայն մահմեդականների հետ նրանք փոխշփման մեջ էին, որի հետևանքով հետագայում համադրվում էին հունական և արևելյան արհեստները[40]:

Էսնաֆություններն ունեին իրենց գանձարանը, որտեղ պահվում էին անդամներից գանձվող անդամավճարները, փոքր խնայողությունները, որոնք ժամանակի ընթացքում այնքան մեծ գումարներ էին դառնում, որ պետությունն ուշադրություն էր դարձնում դրանց վրա: Պողոս Կաղզվանցին հիշատակում է մի դեպք, երբ 1679 թ. կառավարությունը հույներից, հայերից, հրեաներից մեծ չափով արծաթ էր պահանջում արժեզրկված դրամի՝ ակչեի փոխարեն. «... նախ՝ ի յունաց՝ հինգ հազար օխայ արծաթ տալ ի գործարան դրամահատութեան: Նոյնպէս ի հրէից, երեք հազար օխայ, և ի հայոց չորս հազար օխայ. եթե յէսնաֆաց. և եթե յեկեղեցեաց. և այլ ուստի և իցէ պատրաստել և տալ՝ որպէս ասացի ի տպարանս դրամոյ...»[41]:

Հայ և հույն էսնաֆությունները հաճախ էին համագործակցում իրար հետ: Հայտնի է, որ XVI դ. Կ. Պոլսում հայ բեռնակիրները գաղտնի կազմակերպում են հույն հոգևորականի թաղումը, որին արգելել էին թաղել «զօրենս Աստուծոյ»[42]:

---

[38] **Βακαλοπουλος Α.,** նշվ. աշխ., էջ 52:
[39] Նույն տեղում:
[40] Նույն տեղում:
[41] **Աղանեանց Գ.,** Դիվան հայոց պատմութեան, գիրք Ժ, Կ. Պոլիս, 1912, էջ 335:
[42] Նույն տեղում, էջ 84:

XV-XVII դդ. Օսմանյան կայսրությունում հստակ տարանջատում չկար արհեստների և առևտրի միջև: Արհեստավորը հաճախ վաճառում էր նաև իր արտադրանքը: Դեռևս XV դարում Մեհմեդ II-ը հետաքրքրություն էր ցուցաբերում նաև առևտրի նկատմամբ, ուստի քաղաք էր բերում հատկապես այն հույներին, որոնք կապ ունեին Արևմուտքի հետ[43]: Դրանցից էին հույն նավաշինարարները, ձկնորսները, գինեվաճառները և բոլոր նրանք, ովքեր հաճախ էին շփվում օտարերկրացիների հետ, տիրապետում էին մի քանի լեզուների: Հիմնավոր է Ա. Վակալոպուլոսի այն կարծիքը, որ XV-XVII դդ. հույները Օսմանյան կայսրության տնտեսության զարգացման խթանիչներից էին: Նրանք լավ թարգմանիչներ էին, զբաղվում էին միջնորդ առևտրով: Հատկապես ակտիվ էր նրանց կապը Անգլիայի, Ավստրոհունգարիայի, Գերմանիայի և եվրոպական այլ երկրների հետ: Գերմանիան հույներից գնում էր բամբակե թելեր, բուրդ, ծխախոտ և վաճառում մահուդ, գործվածքեղեն և այլն[44]:

XV-XVII դդ. բավական սերտ էին անգլո-թուրքական առևտրական հարաբերությունները, որտեղ ակտիվ գործունեություն էին ծավալում հույն և հայ առևտրականները, հրեա դրամատերերը: Անգլիական ապրանքն ամենուր մրցակցում էր հունականի հետ (օրինակ՝ անգլիական բամբակը Մակեդոնիայում):

Հույն առևտրականները ակտիվ էին նաև Լեվանտի առևտրում: Այստեղ մեծ մրցակցություն կար հույն և իտալացի ձկնավաճառների միջև. հույները հետագայում կարողացան նրանց դուրս մղել այդտեղից: Մայրաքաղաքը Իրանից և Ղրիմից Կաֆայով ստանում էր ցորեն, ալյուր, մեղր: Լեվանտի առևտրում կարևոր նավահանգիստներ էին Քիլիան ու Աքքերմանը: Այստեղ ևս իրենց ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում հույն ձկնավաճառները, հայ միջնորդները և հրեա սեղանավորները[45]: Պետության կողմից ստեղծված Լեվանտի առևտրական կազմակերպությունը վերահսկում էր արտաքին առևտուրը, երկրի ներսում իր վրա էր վերցնում Ստամբուլի դեսպանատների պահպանման հետ կապված ծախսերը: Կային նաև հույն, հայ, հրեա առևտրականներ ու միջնորդներ, որոնց կազմակերպությունը ռոճիկ էր վճարում[46]: Նրա ուշադրության կենտրոնում էր նաև Կաֆայի առևտուրը: Կաֆայից ցորեն, ալյուր, կարագ, պանիր, մեղր և այլ մթերքներ էին ներմուծվում մայրաքաղաք[47]: Այս առևտրական ճանապարհը երկար ժամանակ գտնվում էր թաթարների հսկողության տակ, որոնք մեծ դժվարություններ էին ստեղծում առևտրականների համար: XV-XVII դդ. այդ դժվարությունները հարթում էին տեղի հայ և հույն բնակիչները, որոնք ազդեցիկ էին տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական կյանքում: Նրանց բարձր հեղինակության մասին է խոսում XVIII դ.

---

[43] **Mantran R.,** *Foreign Merchants and the Minorities in Istanbul during the Sixteenth and Seventeenth Centuries (Braude B. Christians and Jews in the Ottoman Empire, London-New York, 1983, p. 128).*

[44] **Βακαλοπουλος A.,** նշվ. աշխ., էջ 82, 85:

[45] **Inalcik H.,** *The Ottoman Empire. The Classical Age 1300-1600. New York-Washington, 1973, p. 129-130.*

[46] **Гордлевский В. А.**, նշվ. աշխ., էջ 29:

[47] **Inalcik H.,** նշվ. աշխ., էջ 130:

թուրք հեղինակը, որը նշում է, որ Կաֆայի հիմնական բնակիչները ոչ թե թաթարներն են, այլ հույներն ու հայերը[48]:

Հույներն ակտիվորեն մասնակցում էին և՛ Լեվանտի, և՛ անգլոթուրքական, և՛ գերմանաթուրքական, նույնիսկ պարսկաթուրքական առևտրին: Մետաքսի առևտրի կենտրոն էր Բուրսան, որտեղ հույն բնակչության ստվար զանգված կար: Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնելու, որ թուրք պատմաբան Հ. Ինալջիկը չափազանցնում է, թե թուրքերը տնտեսական փայլուն գործունեություն էին ծավալում Օսմանյան կայսրությունում[49]: Իրականում նրանք լոկ վարչական պաշտոններ էին զբաղեցնում: Միայն XVII-XVIII դդ. թուրքերը կարողացան ակտիվորեն ներթափանցել շուկայական հարաբերությունների ոլորտ: Այստեղ նրանք հանդիպեցին հայերի, հույների, հրեաների լուրջ մրցակցությանը: Կառավարությունը, ի շահ թուրք առևտրականության, որոշ միջոցներ ձեռնարկեց, որի վառ ապացույցն էր 1635 թ. Մուրադ IV-ի արձակած ֆերմանը՝ Կեսարիայի բնակիչներին հետ ուղարկել իրենց նախկին բնակավայրերը[50]: Հրամանը, իհարկե, չիրականացվեց, քանի որ հայերն ու հույներն արդեն իսկ սերտաճել էին տընտեսության և առևտրի հետ: Նրանք էին ընթացք տալիս միջազգային առևտրին: Նրանք գործում էին և՛ Սվազում ու Թոքաթում, որոնք գյուղատնտեսական ապրանքների կենտրոններ էին, և՛ Անկարայում, որը բըրդի, ոչխարի, թելերի առևտրի կենտրոն էր, և՛ մետաքսի արդյունահանման կենտրոն Բուրսայում: Նրանց շարքերից շուտով առանձնացան շատ դրամատերեր և սեղանավորներ[51]:

Հայտնի է, որ հույները Կ. Պոլսում զբաղվում էին գինեվաճառությամբ: Մայրաքաղաքի համար գինու աղբյուր էին Հռոդոս կղզին և Ղալաթիայի շրջակա գյուղերը: Գինի վաճառելը ևս ավանդական զբաղմունք էր հույների համար: Իրենց գինեվետությամբ հայտնի էին Վլանկան և Սամաթիան: Կառավարությունը խիստ միջոցներ էր կիրառում գինեվաճառների նկատմամբ: Սելիմ I-ի օրենքներից մեկի համաձայն, եթե որևէ մահմեդական գինի էր օգտագործում, ապա ոչ միայն արժանանում էր մարմնական պատիժների, այլև պարտավորվում էր յուրաքանչյուր երկու հարվածի համար նաև վճարել մեկ ակչե[52]:

Սկզբական շրջանում գինու վաճառքը խստիվ արգելվում էր, քանի որ խիստ հակասում էր շարիաթի սկզբունքներին: Հետագայում թեև պետությունը չէր խրախուսում այն, սակայն հարկեր էր սահմանում գինեվաճառության համար: Սա կարելի է բացատրել նրանով, որ գինու վաճառքից ստացվող հարկը մեծ գումար էր կազմում, որից պետությունը չէր ցանկանում հրաժարվել: Ուստի, համաձայն օրենքի, գինի պիտի վաճառեին միայն քրիստոնյաներով բնակեցված թաղամասերում, օրինակ՝ Ղալաթիայում: Կառավարության և գինեվաճառների փոխհամաձայնությամբ որոշվում է, որ քաղաք գինի էր ներմուծվելու միայն գիշերով և խիստ

---

[48] **Гордлевский В. А.,** նշվ. աշխ., էջ 27:
[49] **Inalcik H.,** նշվ. աշխ., էջ 133:
[50] **Mantran R.,** նշվ. աշխ., էջ 133:
[51] Նույն տեղում, էջ 133, 134:
[52] **Тверитинова А.,** *Книга законов султана Селима I, М., 1969, с. 35.я*

գաղտնի: Վավերագրերից մեկում, որը վերաբերում է 1573 թ., այդ մասին ասվում է. «Արդ, հրամայում եմ, իմ հրամանը տեղ հասնելուն պես, հրեաներին, քրիստոնյա համայնքներին և նրանց ներկայացուցիչներին, ինչպես որ պետք է, զգուշացնես, որ դեպի քաղաք բացահայտորեն տակառներով ու տիկերով գինի և օղի չբերեն և գիշերվա ընթացքում գաղտնի կերպով բերած գինին չհամարձակվեն մահմեդականներին վաճառել: Իրար մեջ վաճառք հաստատելու ընթացքում թող գաղտնի հաստատեն և այնպես չանեն, որ իրենց տները գինետան տեսք ընդունի: Թույլ չտաս, որ բացահայտորեն գինի և օղի վաճառեն, և հարսանիքներում և այլ հավաքույթներում նվագի կամ բարձր ձայն լսվի…»[53]:

Ըստ վավերագրի, նախկինում ընդհանրապես արգելվել է գինեվաճառությունը, իսկ գինու հարկը վերացել: Նույնիսկ 1563 թ. վավերագրերից մեկի համաձայն՝ Կ. Պոլսի կադիին տրված հրամանագրում հրամայվում է սրճարանները և գինետները փակել, իսկ գինու առկայության դեպքում, մեջը աղ լցնելով, վերածել քացախի: Նույն ֆերմանով հրամայվում է փակել Կ. Պոլսի այն սրճարանները, որտեղ թաթարական գինի՝ բուզա է վաճառվում: Վավերագիրը վկայում է, որ նախկինում ևս նմանատիպ հրամաններ են եղել[54]: Գինի վաճառելու արգելքը եկել է Մեհմեդ II-ի ժամանակաշրջանից: 1476 թ. հրատարակված մի վավերագրում ասվում է. «Հարկատու անհավատները (հույները, հայերը, հրեաները - Բ. Մ.) իրենց թաղում գտնվող գինետներից բացի մի այլ տեղ գինի չվաճառեն: Եվ իրենց այգու բերքից բացի, եթե մի այլ այգուց շիրա բերեն և իրենց տներում վաճառեն, ապա իմ հսկիչը հայտնաբերելու դեպքում գինին թող բեկլիք դարձնի և նրանց էլ պատժի»[55]: Այնուամենայնիվ, կառավարությունը, տեսնելով, որ քրիստոնյաները գաղտնի գինի են ներմուծել, իսկ դա «վնաս է պատճառում պետական գանձարանին»[56], թույլ է տվել այն գաղտնի ներմուծել քաղաք, բացառությամբ ուրբաթ օրվա նամազի ժամերի:

Պետությունը ժամանակ առ ժամանակ ավելացրել է գինու վաճառքից ստացվող հարկը: Օրինակ՝ 1649 թ. Մեհմեդ փաշայի հրամանով հույն բեռնակիրներն ու գինեվաճառները պիտի *քյուրեկճի* հարկ վճարեին[57]: Եղել են դեպքեր, երբ քրիստոնյաներին առհասարակ արգելվել է իրենց հողատարածքում խաղող աճեցնել: Սելիմ I-ի օրենքներից մեկի համաձայն, եթե «անհավատները» իրենց այգում խաղող էին աճեցնում, ապա, բացի սահմանված հարկից, էմիրին, վեզիրին պիտի վճարեին նաև ստացված մթերքի մի մասը[58]: Փաստորեն, պետությունը ոչ թե ի վիճակի չէր արգելել գինեվաճառությունը, այլ շերիի արգելքին նայում էր ի միջի այլոց, քանի որ այդ առևտուրը մեծ եկամուտ էր բերում: Սակայն ժամանակ առ ժամանակ խստիվ արգելվում էր գինու ներմուծումը: XVII դարում մեծ վեզիր

---

[53] **Փափազյան Ավ.,** նշվ. աշխ., էջ 219:

[54] Նույն տեղում, էջ 216:

[55] Նույն տեղում, էջ 130, 163:

[56] Նույն տեղում, էջ 218:

[57] Օրագրութիւն **Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի**, Երուսաղէմ, 1939, էջ 6-7:

[58] **Тверитинова А. С.,** *Аграрный строй Османской империи XV-XVII вв. (документы и материалы), М., 1963, с. 51.я*

Քյոփրյուլու Ահմեդ փաշայի ժամանակ հույն գինեգործներին արգելվել է Մարմարայից բերած գինին քաղաք ներմուծել: Դրանք աշնան ամիսներն էին, և հույները, որևէ ելք չունենալով, գինին ծովն են թափել: Դրանից բավական մեծ վնաս են կրել հույն գինեգործները[59]:

Եղել են դեպքեր, երբ հույն գինեվաճառները հայերի ու հրեաների հետ միասին կաշառել են դեսպաններին[60]: Այդ է վկայում ֆրանսիացի ճանապարհորդը. «Որևէ մեկը ուզածի չափ կարող է խաղող գնել, որ իր տանը (գինի) ճզմի: Սակայն, թուրքերը, որոնք նույնպես կրնան խաղող ծախել կամ ուտել, գինի չեն կրնար շինել կամ խմել, և ոչ ալ հույները, հայերը կամ հրեաները կրնան գինի վաճառել Կ. Պոլսո մեջ, բացի դեսպանին պաշտպանության տակ: Եվ, որովհետև այդ պաշտպանությունը (դեսպաններուն) նվերներ կ' արժե, այդ իսկ պատճառով գինին հոն (Կ. Պոլսո) մեջ կրկին գնով կը ծախվի»[61]: Սակայն գինու արժեքի կրկնակի բարձրացումն ու կառավարության կիրառած խիստ միջոցառումներն անգամ մահմեդականների այն քիչ օգտագործելու պատճառ չեն դառնում: Իրականում գինեվաճառության կանխումը դյուրին գործ չէր, քանի որ ոգելից խմիչք օգտագործում էին նաև արքունիքում: Սելիմ II-ը նույնիսկ ուներ «հարբեցող» (մեստ) մականունը: Մուրադ III-ի մերձավորը՝ Շուջա անվամբ, մեծ քանակությամբ գինի էր պահում[62]: Այս իրավիճակը շարունակվել է նաև հաջորդ դարերում: XVII դ. վերջի - XVIII դ. սկզբի ֆրանսիացի ճանապարհորդ դը Լա Մոտրեի վկայությամբ՝ հակառակ այն բանի, որ թուրքերին արգելված էր գինի օգտագործելը, նրանք խմում էին քրիստոնյաներից շատ, իսկ դա մեծ շահույթ էր բերում հույն, հայ և հրեա գինեպաններին. «Թուրք վաճառողներն և խմողները ենթակա են «ֆալախայի: Սակայն, իզուր, քանի որ օրենքը գործադրողներն իսկ անհագ խմողներ են»[63]:

Հույները Կոստանդնուպոլսում զբաղվում էին նաև մանր ապրանքների և սուրճի առևտրով: Չնայած սուրճի վաճառքը և սրճարաններ բացելը շարիաթի սկզբունքով արգելված չէին, կառավարությունը չէր ցանկանում դրանց տարածումը: Սուրճ վաճառողները պիտի հարկ վճարեին՝ *թահմիս-ի քահվե* անվամբ: Հայտնի է Մուրադ VI-ի խիստ վերաբերմունքը ծխախոտի և սուրճի նկատմամբ: Դրա մասին Առաքել Դավրիժեցին գրում է. «Թուին ՌՁԲ(1633) յօգոստոս ամսոյ սուլթան Մուրատն սաստիկ եասախ արար թութունին ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ, զամենայն ղահվախանէք, որ ամենայն քաղաքս կային, քակեալ աւերեաց…»[64]:

---

[59] **Քեսմիրճեան Ե.,** Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ օսմանցոց թագաւորացն, Ե., 1982, էջ 265:

[60] Կոստանդնուպոլսում պաշտոնավարող դեսպանները կառավարության կողմից իրավունք էին ստացել ներմուծել այնպիսի սննդամթերք, որ արգելում էր մահմեդական կրոնը [գինին, խոզի միսը և այլն (**Քյուրտյան Հ.,** նշվ. հոդվ., էջ 99)]:

[61] Նույն տեղում, էջ 99:

[62] **Гордлевский В. А.,** նշվ. աշխ., էջ 35:

[63] **Քյուրտյան Հ. Ա.,** նշվ. հոդվ., էջ 99:

[64] Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեան, Ե., 1990, էջ 433:

Փաստորեն, օսմանյան պետությունը XV դարում Կ. Պոլսում ձևավորվում էր մահմեդական կրոնի և նրա սկզբունքների գերազանցության հիման վրա: Եվ չնայած միլեթների համակարգի առկայությանը, այս կրոնը խիստ անտեսում էր ոչ մահմեդական բնակչությանը: Դա նկատվում էր կյանքի բոլոր բնագավառներում: Հայտնի է, որ Կ. Պոլսի փողոցներում ոչ մահմեդականները պիտի տարբերվեին առաջին իսկ հայացքից, իրավունք չունեին կրելու թանկարժեք զարդեր կամ վառ գույնի կոշիկներ: Այս դեպքում նրանք ընդհուպ մահվան կդատապարտվեին:

Հույների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը XVI-XVII դդ. սկսում է աստիճանաբար նվազել: Նրանք հետ են մղվում արհեստների բնագավառում, չնայած շարունակում էին առաջատար տեղ գրավել հատկապես սնծովյան առևտրում և լումայափոխության ասպարեզում[65]: Անկախ Օսմանյան կայսրությունում հույների, հայերի կամ հրեաների կարևոր դերից, նրանք ոչ ցանկալի տարրեր էին տիրող մահմեդականի համար: Քրիստոնյայի ու մահմեդականի իրավական տարբերությունը նկատելի էր կյանքի բոլոր բնագավառներում: Դարավոր սովորույթ էր դարձել հայերից և հույներից ապօրինի հարկերի գանձումը: Բացի սահմանված հարկերից, հարկահաններն ու տեղական կառավարման մարմիններն իրենց համար առանձին հարկեր էին սահմանում, ինչպես հագուստի, մթերքի, ճանապարհածախսի և այլ հարկեր: Հույները, հայերն ու հրեաները ոչ միայն գլխահարկ էին տալիս, որ գանձվում էր ամեն մի տղամարդուց, այլև համայնքը հարկ էր վճարում նույնիսկ աղոթատեղեր ազատ այցելելու, իր առանձին գերեզմանատան համար: Ականատեսը գրում է, որ հույն, հայ, հրեա տղամարդիկ տալիս էին մեկ չերվոնեց՝ որպես գլխահարկ: Ամեն տարի հույները եկեղեցիներ ազատ այցելելու համար տալիս էին 30 հազար չերվոնեց համայնքի կողմից և 25 հազար՝ եկեղեցու կողմից: Թուրք կնոջ ամուսնության դեպքում վճարվում էր 4 գրիվին, իսկ քրիստոնյայի համար՝ մեկ չերվոնեց[66]:

Վավերագրերից մեկի համաձայն՝ պետության հարկային քաղաքականությունից դժգոհել են բոլոր հարկատուները. «Մահմեդական, քրիստոնյա և հրեա թոքաթցիները, հարկերի բաշխման եղանակից դժգոհ լինելով, շարունակ վեճի մեջ են գտնվել: Ի վերջո ժողով գումարելով, ընդունել են հետևյալ որոշումը: Վիլայեթի ընդհանուր գումարից Թոզանլուի, Կումանատի և Կաֆիրների նահիյեները հանելուց հետո, բոլոր հարկերն ու վճարումները բաժանվելու են հինգ մասի: Հինգից երկու բաժինը վճարելու են մահմեդականները, իսկ երեքն էլ՝ հույները, հայերը և հրեաները: Մահմեդականների մնացորդները գանձվելու է մահմեդականներից, իսկ մնացածն էլ մյուսներից: Այնպես որ մնացորդները մեկը մյուսի հետ չպետք է շփոթել»[67]: Վավերագրերում նշված են ժողովին մասնակցած

---

[65] **Mantran R.,** նշվ. աշխ., էջ 133:

[66] **Старовольский С.,** *Двор цесаря турецкого., СПб., 1883, с. 20.я*

[67] **Փափազյան Ավ.,** նշվ. աշխ., էջ 162:

երևելի անձանց անունները, որոնցից էին հավանաբար ազգությամբ հույն Իբենսոլու Պոկասը, Կիրասոնսոլին[68]:

Բացի հարկերից, հույները, հայերն ու հրեաները պարտավոր էին ձրի աշխատել արքունիքի, տեղական կառավարական մարմինների համար: Կառավարությունը սկզբում ստիպում էր իրենից վարկ վերցրած արհեստավորին կամ առևտրականին ձրի աշխատել: Որոշ ժամանակ անց այդ աշխատանքը վերափոխվեց հարկի՝ *քասապ աքչեսի* անվամբ: Սակայն օսմանյան աստիճանավորները հաճախ ստիպում էին միաժամանակ և՛ աշխատանքը կատարել, և՛ հարկը վճարել: Դրանից տուժում էին հատկապես ձկնորսները, նավաշինարարները, արքունի վաճառականները, ոսկե թելեր արտադրողները և այլն: 1585 թ. Կոստանդնուպոլսի հույները պահանջում են իրենց ազատել հարկից, քանի որ արքունիքի համար ծառայություններ են կատարել[69]: Սակայն՝ ապարդյուն:

Փաստորեն, Օսմանյան կայսրությունում հայերի ու հույների դերը աստիճանաբար նվազում էր: Ծանր պայմանների ու հարկերի, ծայրահեղ աղքատության պատճառով էլ շատ քրիստոնյա ընտանիքներ լքում էին կայսրության սահմանները, մի մասն էլ, իր և ընտանիքի ապահովությունը վտանգի տակ դնելով, շարունակում էր դիմակայել տիրող վարչակարգի կամայականություններին:

ГРЕЧЕСКАЯ ОБЩИНА КОНСТАНТИНОПОЛЯ В XV-XVII ВВ.

БРУТЯН М. А.

Резюме

В 1453 г. после завоевания турками Константинополя в жизни греческого народа произошли большие изменения. За короткое время город стал центром греческой диаспоры. В Османской империи благодаря грекам, а также соседствующим с ними армянам и евреям, оживились торговля и ремесленное дело. Мехмед II и последующие султаны поощряли их деятельность. Греки занимались виноделием, навигацией, рыболовством, конкурируя с армянами в сфере торговли и ремесел, что было на руку туркам, еще более разжигавшим их соперничество. Играя видную роль в экономической жизни Османской империи, греки наряду с армянами находились в бесправном положении.

---

[68] Նույն տեղում:

[69] Նույն տեղում, էջ 237: